ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____/Ս. Դեղոյան/___ «_31_____»

_____ օգոստոս _____ 2023 թ.

Կ.Տ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի

մարզ համայնք

հ. 179 հիմնական դպրոցի

9-ՐԴ բ/ դասարանի

Ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

Անետա Անդրանիկի Գրիգորյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

«_2023_-_2024_» ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ *(դասարանի ընդհանուր բնութագիրը)* _ 9բ դասարանում սովորում են 25 աշակերտ՝ 16 տղա, 9 աղջիկ: Անցած ուստարում ունեցել ենք, երեք հարվածային: Աշակերտները ընդհանուր առմամբ ունեն բավարար ունակություններ: Դասարանը համախմբված է, որտեղ տիրում է ընկերական, առողջ մթնոլորտ: Սովորողները ունեն զանազան հետաքրքրություններ: Դասարանում շատերը հաճախում են ֆուտբոլի խմբակ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հետևել սովորողների առաջադիմությանը և կարգապահությանը, համագործակցելով աշակերտների, ծնողների, ՄԿԱ և ՈՒԱ գծով տնօրենի տեղակալների և դպրոցի տնօրենի հետ: Սովորողի մոտ

- ձևավորել և զարգացնել մտավոր, հոգևոր,ֆիզիկական և սոցիալական զարգացումը,նրա անձի, որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը:
- դասարանում զարգացնել ուսման առաջադիմության բարձրացման, բարեկամության, ընկերասիրության պատասխանատվության զգացում
- մշտապես հետևել դասարանում աշակերտների համախմբվածությանը
- կազմակերպել միջոցառումներ՝ այցելել թանգարաններ, մշակույթի կենտրոններ և այլն
- համագործակցել ծնողական խորհրդի հետ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն __Աշակերտների հոգևոր դաստիարակության գործում մեծ դեր են խաղում իմանալ սեփական ժողովրդի պատմությունը, գրականությունը, մշակույթը: Հոգևոր դաստիարակությանը նպաստելու նպատակով այցելել եկեղեցիներ, մասնակցել տաղավար տոներին, կարևորել եկեղեցու դերը և նշանակությունը ազգապահպանման գործում:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ցույց տալ արվեստի դերը և նշանակությունը հայ ժողովրդի կյանքում: Հայկական մշակույթի մասին զրույցներ անցկացնել և բացատրել, թե ինչով է հայկական մշակույթը առանձնանում և տարբերվում:Գեղագիտական դաստիարակությունը հնարավորություն է ընձեռնում սովորողներին յուրացնել շրջապատող աշխարհի երևույթների, գործընթացների գեղեցկությունը, զարգացնել գեղագիտական կուլտուրան և ճաշակը:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Սերմանել սեր դեպի հայրենիքը, դաստիարակել հայրենասիրություն և արժանապատվություն: Ծանոթացնել որոշ պատմական հերոսական դրվագների հետ, պատմել հայ

բանակի ձևավորման, հերոսական ճակատամարտերի մասին :Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, սեր հայ ժողովրդի հանդեպ:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն** __Ֆիզիկական դաստիարակության նպատակն է հասարակությանը տալ առողջ սերունդ,սովորողի մեջ ամրապնդել առողջ ապրելակերպի սկզբունքը՝կարևորել սպորտի դերը : Հետևել սովորողների ֆիզիկական առողջությանն ու անհատական հիգիենային:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն** _Սովորողի մեջ ձևավորել դրական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, յուրաքանչյուրի մեջ խորացնելով սերը դեպի ֆիզիկական աշխատանքը: Հասնել այն գիտակցությանը որ աշխատասիրությունը վերածել ամենօրյա սովորության և այն դարձնել բնավորության գիծ:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն** -Բնապահպանական դաստիարակության հիմքում ընկած է բնությունը, նրա հավասարակշռության պահպանումը, որը համամարդկային հիմնախնդիր է, որով զվաղվում է ամբողջ մարդկությունը և նրա պահպանումը յուրաքանչյուրիս պարտականությունն է: Սովորեցնել սիրել և պահպանել մայրենի հողը և բնությունը:

4. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ Ամուր պահել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Պարբերաբար կազմակերպել ժողովներ և՛ աշակերտների, և՛ծնողների հետ: Ծնողների հետ աշխատել համախմբված, ընդունել միասնական որոշումներ և դրանց համար կրել պատասխանատվություն:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
01.09.2023	Գիտելիքի օրը	05.09.2023	
1-ին շաբաթ	Աշակերտներին ծանոթացնել ուսումնական բեռնվածության առավելագույն չափի հետ , դպրոցական կանոններին (ավագի և աշ. խորհրդի անդամների ընտրություն)	12.09.2023	Դասղեկ և աշակերտներ
2-րդ շաբաթ	Ինչպե՞ս եմ տեսնում իմ Հայրենիքը: Քննարկումներ աշխարհում տեղի ունեցող պրոցեսների վերաբերյալ	19.09.2023	Դասղեկ և աշակերտներ
3-րդ շաբաթ	Հայաստանի Անկախության օր	26.09.2023	Դասղեկ և աշակերտներ
4-րդ շաբաթ	Հայ զինվոր, խոնարվում եմ Քո առաջ	03.10.2023	Դասղեկ և աշակերտներ
5-րդ շաբաթ	<<Իմ սիրելի ուսուցիչը>> թեմայով քննարկում	10.10.2023	Դասղեկ և աշակերտներ
6-րդ շաբաթ	Ուսումնական օգնություն համապատասխան կարիք ունեցող աշակերտներին	17.10.2023	Դասղեկ և աշակերտներ
7-րդ շաբաթ	Ինչպիսի՞ գրքեր ենք մենք կարդում	31.10.2023	Դասղեկ և աշակերտներ
8-րդ շաբաթ	<<Առողջ հոգի առողջ մարմնում>> ճշմարությունը դարձնել համոզմունք	07.11.2023	Դասղեկ և աշակերտներ
9-րդ շաբաթ	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության և դրանց կարևորության մասին	14.11.2023	Դասղեկ և աշակերտներ
10-րդ շաբաթ	Հետաքրքրասիրություն թե՞ բանիմացություն. տարբերությունների և նմանությունների մասին	21.11.2023	Դասղեկ և աշակերտներ
11-րդ շաբաթ	Բոլորս տարբեր ենք, բայց ապրում ենք միասին	28.11.2023	Դասղեկ և աշակերտներ
12-րդ շաբաթ	Ինչպես հասկանալ, թե ով է իսկական ընկերը	05.12.2023	Դասղեկ և աշակերտներ
13-րդ շաբաթ	Բնության և մարդկության սերտ կապի մասին Բնական աղետները և դրանց հետևանքները (դեկտեմբերի 7)	12.12.2023	Դասղեկ և աշակերտներ
14-րդ շաբաթ	Բոլոր մասնագիտությունները կարևոր են	19.12.2023	Դասղեկ և աշակերտներ
15-րդ շաբաթ	Տարեմուտի խոհեր. 1-ին կիսամյակի ամփոփում	09.01.2024	Դասղեկ և աշակերտներ
16-րդ շաբաթ	Երկրորդ կիսամյակի աշխատանքների նախագծում և քննարկում	16.01.2024	Դասղեկ և աշակերտներ
17-րդ շաբաթ	Կրթության դերը սովորողի աշխարահայացքի ձևավորման մեջ	23.01.2024	Դասղեկ և աշակերտներ

18-րդ շաբաթ	Հայոց բանակի օր	30.01.2024	Դասղեկ և աշակերտներ
19-րդ շաբաթ	Գիտակցական կարգապահություն և վարքի կուլտուրա	06.02.2024	Դասղեկ և աշակերտներ
20-րդ շաբաթ	Հայտնի հայ արվեստագետներ	13.02.2024	Դասղեկ և աշակերտներ
21-րդ շաբաթ	Տեխնածին բնույթի վթարներ, կանխարկելման ուղիներ	20.02.2024	Դասղեկ և աշակերտներ
22-րդ շաբաթ	Իմ նախասիրությունները	27.02.2024	Դասղեկ և աշակերտներ
23-րդ շաբաթ	Հայկական ավանդույթների մասին	05.03.2024	Դասղեկ և աշակերտներ
24-րդ շաբաթ	Կանանց միջազգային օր	12.05.2024	Դասղեկ և աշակերտներ
25-րդ շաբաթ	Կոնֆլիկտների լուծման խաղաղ տարբերակների մասին	19.03.2024	Դասղեկ և աշակերտներ
26-րդ շաբաթ	Ապագա քաղաքացու ձևավորում և մարդկային արժանապատվություն	02.04.2024	Դասղեկ և աշակերտներ
27-րդ շաբաթ	Մայրության և գեղեցկության տոնի մասին	09.04.2024	Դասղեկ և աշակերտներ
28-րդ շաբաթ	Զատկի տոնը և իր խորհուրդը	16.04.2024	Դասղեկ և աշակերտներ
29-րդ շաբաթ	Ժպիտը կյանք է պարգևում	23.04.2024	Դասղեկ և աշակերտներ
30-րդ շաբաթ	Մաքուր պահենք մայր բնությունը	30.04.2024	Դասղեկ և աշակերտներ
31-րդ շաբաթ	Աշխատասիրությունը գեղեցկացնում է մարդուն	07.05.2024	Դասղեկ և աշակերտներ
32-րդ շաբաթ	Հաղթանակի օր	14.05.2024	Դասղեկ և աշակերտներ
33-րդ շաբաթ	Մոտենում են ամառային արձակուրդները	21.05.2024	Դասղեկ և աշակերտներ